2021 թ. ՀՀ վիճակագրական կոմիտեի ընթացիկ հրապարակման տվյալներով՝ 2021 թ. հունվարին ՀՀ-ը, ամսական կտրվածքով, ժամանակավորապես մուտք է գործել բնակչության սեղմված վերարտադրության փուլ. 2.795 ծնունդ և 3.295 մահ, հետևաբար բնական նվազումը կազմել է -500[98]: Բացասական միտումը պահպանվել է նաև երկու ամսվա հանրագումարային ցուցանիշում. 2021 թ. հունվար-փետրվարին գրանցվել են 5.495 ծնունդներ և 5.960 մահեր, այսինքն՝ տարբերությունը բացասական է՝ -465[99]: Միևնույն ժամանակ պետք է նշենք, որ 2021 թ. հունվար-փետրվարին գրանցված մահվան դեպքերի համար տողատակում մեկնաբանված է հետևյալը. «Որից (մահերից - Մ.Մ.) 462 դեպքը, ըստ նախնական տվյալների՝ զինվորական գործողությունների հետևանքով: Ընդ որում, հարկ է նշել, որ թեև սույն դեպքերի՝ հայտնաբերման և նույնականացման/ճանաչման գործողություններով պայմանավորված, քաղաքացիական կացության գրանցումներն իրականացվել են 2021թ. հունվար և փետրվար ամիսներին, սակայն ժամանակագրա-

[98] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին», էջ 117:
[99] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-փետրվարին», Երևան, 2021, էջ 126:

կան առումով տեղի են ունեցել 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում, և հետևաբար, տվյալների վերջնական մշակման փուլում դրանք կներառվեն 2020թ. մահվան դեպքերի թվակազմում, արդյունքում կվերանայվեն նաև 2021թ.-ի ցուցանիշները»[100]: Այստեղ մոռացել են նշել, որ կվերանայվեն նաև 2020 թ. ցուցանիշները, և նույնականացման գործընթացի նման միտումների պահպանման դեպքում 2020 թ. ցուցանիշը բացասական կդառնա: Ինչպես արդեն նշել ենք 2021 թ. սկզբին հրապարակված վիճակագրության հիման վրա 2020 թ. գրանցվել է ՀԽՍՀ և ՀՀ պատմության մեջ մահացության առավելագույն գործակիցը՝ 11.9, բացարձակ ցուցանիշով՝ 35.371 մահ, իսկ հակառեկորդային 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի տարում՝ 35.567: Արցախյան 2020 թ. պատերազմից երկու ամիս անց՝ 2021 թ. հունվար-փետրվարին, հայտնաբերված և նույնականացված 462 աճյուններից հետո պարզ էր, որ 2020 թ. մահերի թիվը 35.833 է, իսկ գործակիցն էլ 12-ից ավելի է, և սա դեռ վերջնական ցուցանիշը չէ: Այս աղետալի տվյալները գերազանցում են Սպիտակի երկրաշարժի ցուցանիշներին:

Մարտին միտումները դրական են եղել, և ընդհանուր ցուցանիշները մի փոքր բարելավվել են. 2021 թ. հունվար-մարտին գրանցվել են 8.583 ծնունդներ (+13.3%) և 8.343 մահեր (+14.5%), հետևաբար բնական հավելաճն աննշան դրական է դարձել՝ +240: Բոլոր մարզերում, բացի Գեղարքունիքից և Երևանից, մահերը գերազանցել են ծնունդներին: Առաջին եռամսյակում գրանցվել է

[100] Նույն տեղում:

COVID-19-ի պատճառով մահվան 949 դեպք[101]: Հրապարակման տողատակում մահացության մասին գրված է. «2021թ. հունվար-փետրվարի ցուցանիշը վերանայված է 31.03.2021թ. դրությամբ»[102]: Այս սրբագրումը նշանակում է, որ 2021 թ. հունվար-փետրվարին նույնականացված մահվան դեպքերի վիճակագրությունն արդեն տեղափոխվել է 2020 թ. հաշվարկի մեջ, մանավանդ որ առաջին եռամսյակի տվյալների հրապարակման մեջ որևէ ցուցանիշ կամ մեկնաբանություն չկա պատերազմի մասին: Սա նշանակում է, որ մեկ տարի անց տվյալների թարմացումը բերելու է իրավիճակի, երբ 2020 թ. բնական հավելաճը զրոյական կամ բացասական հաշվեկշռով կլինի, իսկ 2021 թ. ցուցանիշները լրջորեն վերանայվելու են:

Ի տարբերություն մարտյան դրական միտումներին՝ ապրիլին մահացության կտրուկ աճ է նկատվել, որ պայմանավորված է եղել կորոնավիրուսային հիվանդության հետևանքով մահվան դեպքերի զգալի աճով: 2021 թ. հունվար-ապրիլին գրանցվել են 11.466 ծնունդներ (+12.7%) և 11.704 մահեր (+23.9%), հետևաբար բնական աճը բացասական է՝ -238: Փաստորեն, նշված ամիսներին մահացության աճը կրկնակի գերազանցել է ծնելիության աճին, ընդ որում՝ COVID-19-ով պայմանավորված մահվան դեպքերը 1.722-ն են (ընդհանուր մահացության 14.7%-ը)[103]: 2020 թ. ռազմական գործողությունների հետևանքով հայրենիքը պաշտպանելիս զոհված զինծառայողների մարմինների՝ 2021 թ. հունվար-ապրիլին հայտնաբեր-

[101] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-մարտին», Երևան, 2021, էջ 164-166:
[102] Նույն տեղում, էջ 164, հղում 2:
[103] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-ապրիլին», Երևան, 2021, էջ 113-114:

ման և նույնականացման արդյունքում քաղաքացիական կացության գրանցումների ցուցանիշները, այսինքն՝ զոհված զինծառայողների թվաքանակի վերաբերյալ վիճակագրությունն առանձնացված չէ հրապարակված տվյալներում: Բացի այդ՝ առաջին եռամսյակից հետո տարանջատված չեն Արցախում հաշվառված, բայց պատերազմից հետո ՀՀ-ում բնակվող քաղաքացիներին առնչվող ծնունդների և մահերի դեպքերը, որոնց ներառումը տվյալների մեջ արհեստականորեն ավելացնում է ՀՀ համապատասխան ցուցանիշները:

Եթե 2020 թ. տվյալները կարող են կապվել պատերազմի և համավարակի հետ, ապա այդ երկու արհավիրքների պատճառով մահվան դեպքերի թվաքանակն ընդհանուր ցուցանիշից հանելու դեպքում կտեսնենք, որ առանց այդ էլ մահացությունը մի փոքր աճել է, ինչը շարունակվել է 2021 թ.: Տարվա առաջին չորս ամիսներին մահացության 23.9% աճի պայմաններում COVID-19-ով պայմանավորված մահվան դեպքերը, ինչպես արդեն նշել ենք, ընդհանուր մահացության 14.7%-ն էին միայն: Բանն այն է, որ աստիճանաբար մահացողների հիմնական մասը դառնում են 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմից հետո ծնվածները, երբ ծնելիությունը տարեցտարի կտրուկ աճում էր: Առաջիկա տարիներին (մինչև 10-15 տարվա հեռանկարի դիտարկմամբ) մահացության հիմնական տարիքային խումբը դառնալու են 1954-1963 թթ. ծնվածները, երբ ծնելիության ցուցանիշները շատ բարձր էին, հետևաբար մահացության ներկա պատկերը շատ ավելի վատթար տեսք է ստանալու, ընդ որում՝ դժվար է հույս տածել, որ ծնելիության ցուցանիշներն ավելի բարձր կլինեն աճող մահացությունից:

Մայիսին, նախորդ ամսվա համեմատ, ցուցանիշներն ավելի բարվոք են եղել, սակայն հինգ ամսվա կտրվածքով բնակչության բնական աճը շարունակել է բացասական մնալ՝ -19: 2021 թ. հունվար-մայիսին ՀՀ-ում գրանցվել է 14.318 ծնունդ և 14.337 մահ[104]: Ծնունդների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 11.87 %-ով, իսկ մահերինը՝ 24.5 %-ով: Հատկանշական է, որ պատերազմից առաջ մայրանալ պատրաստվողներն են դեռ նշված տվյալների մեջ, հետևաբար հոգեբանական նոր գործոնները դեռևս չեն արտահայտվում ցուցանիշների մեջ: Թեև առանձին ընտանիքներում պատերազմից հետո ևս մեկ երեխա ունենալու որոշում է կայացվել, սակայն վերարտադրողական նման վարքագիծը համատարած բնույթ չի կրում, վիճակագրորեն հստակ չափելի չէ և պետության ժողովրդագրական քաղաքականության արդյունքը չէ. որոշմանը ամուսնական զույգերը հանգել են սեփական արժեքային բարձր պատկերացումներից ելնելով:

2021 թ. առաջին կիսամյակի ժողովրդագրական ամփոփ ցուցանիշները հետևյալն են՝ 17.211 ծնունդ (+8.9% 2020 թ. առաջին կիսամյակի համեմատ) և 16.627 մահ (+15.3%): Բնական հավելաճը կազմել է 584 մարդ (-57.7% նախորդ տարվա համեմատ), ընդ որում՝ այն ապահովվել է գրեթե բացառապես Երևանի շնորհիվ (ընդհանուր դրական ցուցանիշի 97.6%-ը): Ցավալի է, որ բնական աճը բացասական էր ՀՀ 10 մարզերից 9-ում՝ Լոռիում (-397), Շիրակում (-316), Տավուշում (-282), Արարատում (-178), Արմավիրում (-159), Սյունիքում (-128), Կոտայքում (-116), Վայոց ձորում (-99),

[104] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-մայիսին», Երևան, 2021, էջ 147:

Արագածոտնում (-85): Յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով գործակիցների տեսանկյունից պատկերն ավելի վատթար է (Տավուշ՝ -4.8, Վայոց ձոր՝ -4.2, Լոռի՝ -3.8, Շիրակ՝ -2.8, Սյունիք՝ -1.9 և այլն): Մահացության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ապրիլին (3.361), ամենացածրը՝ հունիսին (2.290), իսկ ծնելիության ամենաբարձր ցուցանիշը՝ մարտին (3.085), ամենացածրը՝ փետրվարին (2.680): Մահվան դեպքերից 2.241-ը COVID-19-ից են, իսկ 151-ը 2020 թ. պատերազմում զոհվածներ են, որոնց գրանցումները կատարվել են 2021 թ. ապրիլ-հունիսին: Բացի այդ՝ 18.6%-ով ավելացել է մեռելածինների թվաքանակը[105]: 100 աղջկա հաշվով ծնվել է 108.6 տղա՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 110.4-ի փոխարեն:

2020 թ. պատերազմից հետո Արցախի ժողովրդագրական իրավիճակը աղետալի միտումներ է ունեցել: 2021 թ. առաջին կիսամյակում Արցախում գրանցվել են 660 ծնունդ և 748 մահ, հետևաբար բնակչության բնական աճը պատմության մեջ առաջին անգամ բացասական է եղել՝ -88: 2020 թ. առաջին կիսամյակի համեմատ մահացությունն աճել է 25.5%-ով, ծնելիությունը նվազել է 32.7%-ով[106] (2016 թ. համեմատ՝ կրկնակի), և դա այն դեպքում, որ Արցախը միշտ աչքի է ընկել ՀՀ-ից ավելի բարձր ծնելիության գործակցով:

Առաջին կիսամյակից հետո պատկերը փոքր-ինչ բարելավվել է ՀՀ-ում: Հունվար-հուլիսին գրանցվել են 20.126 ծնունդներ և 18.874 մահեր (որից 2.331-ը կամ 12.4%-ը՝ COVID-19-ից): Այս ցուցանիշները 2019 և 2020 թթ. նույն ամիսների հետ համեմատելիս

[105] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին», Երևան, 2021, էջ 144-147:
[106] Տե՛ս «Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին», Ստեփանակերտ, 2021, էջ 90:

ստանում ենք տխուր պատկեր. ծնելիությունն ավելացել է համապատասխանաբար 3.9 և 3.6%-ով, մահացությունը՝ 19.5 և 10.1%-ով, իսկ բնական հավելաճը նվազել է 65 և 45.5%-ով՝ կազմելով 1.252 մարդ: Մեռելածինների թիվն ավելացել է 15.7%-ով[107]:

Միտումները պահպանվել են նաև հաջորդ ամիս: Հունվար-օգոստոսին ՀՀ-ում գրանցվել են 23.440 ծնունդներ և 21.115 մահեր (որից 2.534-ը կամ 12%-ը՝ COVID-19-ից): Այս ցուցանիշները 2019 և 2020 թթ. նույն ամիսների հետ համեմատելիս ստանում ենք հետևյալ պատկերը. ծնելիությունը ավելացել է համապատասխանաբար 2.7 և 2.5%-ով, իսկ մահացությունն ավելացել է 18.7 և 9.7%-ով. բնական հավելաճը նվազել է 53.8 և 35.7%-ով՝ կազմելով 2.325 մարդ: Մեռելածինների թիվն ավելացել է 11.1%-ով: Մահացությունը գերազանցել է ծնելիությանը հունվարին և ապրիլին[108]:

2021 թ. հունվար-սեպտեմբերին գրանցվել են 11.2%-ով ավելի շատ մահվան դեպքեր, քան 2020 թ. հունվար-սեպտեմբերին, որոնք, բացի սեպտեմբերի վերջին օրերից, նախապատերազմական էին և չէին կրում պատերազմի ժողովրդագրական հետևանքները: Գրանցվել են 26.809 ծնունդներ (նախորդ տարվա համեմատ՝ +0.9%) և 23.674 մահեր (+11.2%, իսկ 2019 թ. համեմատ՝ +20.9%): Մահվան դեպքերի 12.5%-ի պատճառը COVID-19 համավարակն է, իսկ 64.7%-ով ավելացել են ՄԻԱՎ-ով հարուցված դեպքերը: 12.2%-ով աճել է մեռելածինների թիվը: ՀՀ բնակչության բնական հավելաճն ինը ամսում կազմել է 3.135 մարդ, որը 2020 և 2019 թթ. համե-

[107] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հուլիսին», Երևան, 2021, էջ 121-122:
[108] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-օգոստոսին», Երևան, 2021, էջ 127-128:

մատ նվազ ցուցանիշ է համապատասխանաբար 40.6 և 54.3 %-ով: Բնական աճը բացասական է Լոռում (-368), Տավուշում (-242), Շիրակում (-210), Սյունիքում (-32), Վայոց ձորում (-20), իսկ ընդհանուր դրական հավելաճը Երևանի +2.692 ցուցանիշի շնորհիվ է[109]:

Հոկտեմբերին մահացությունը կտրուկ աճել է, որի պատճառը կորոնավիրուսային հիվանդությունն է: Մի քանի օր ՀՀ-ը դուրս չէր գալիս COVID-19-ի պատճառով օրական մահացության ցուցանիշով աշխարհի վատագույն տասնյակից, և դա այն դեպքում, որ ՀՀ-ից Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը զեկուցված և նաև նույնությամբ Ջ. Հոփքինսի համալսարանի աղյուսակում հրապարակված ցուցանիշներում ներառված չեն COVID-19 ունեցած, բայց այլ պատճառով մահացածները, որոնց վերաբերյալ վիճակագրությունը ՀՀ-ում առանձին է հրապարակվում: Հոկտեմբերի երկրորդ կեսին ՀՀ-ն ութերորդն էր՝ 14 մահ 1 մլն բնակչի հաշվով: ՀՀ-ից բարձր հորիզոնական զբաղեցնող երկրների ցանկում միայն Բուլղարիան (6.9 մլն), Ռումինիան (19 մլն) և Ուկրաինան (43.4 մլն) են, որ ունեն միլիոնից ավելի բնակիչ: Նման պատկերի ներքո ՀՀ իրական հորիզոնականը չորրորդ տեղն է, եթե ոչ երրորդը՝ այլ պատճառով մահացած COVID-19 վարակակիրների ներառման պարագայում: Համավարակի սկզբից մինչև 2021 թ. հոկտեմբերի 23-ը ՀՀ-ում COVID-19-ից մահացել է 7.231 մարդ (COVID-19-ի պատճառով վախճանված՝ 5.975, COVID-19 ունեցած, բայց այլ պատճառով մահացած՝ 1.256), ինչը կազմում է ՀՀ մշտական բնակչության մոտ 0.25%-ը: Միայն նախորդող 30 օրերի ընթացքում համավարակը

[109] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-սեպտեմբերին», Երևան, 2021, էջ 152-155:

խլել է շուրջ 800 մարդու կյանք: Հարևան Ադրբեջանը և Վրաստանը վերը նշված ժամկետում զեկուցել են ԱՀԿ-ին համապատասխանաբար 6.869 և 9.699 մահվան դեպքեր: Շնչառական կամ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացության աճ է նկատվում 2020 թ. սկսած: Բացի այդ՝ կորոնավիրուսային հիվանդությունից բուժված մարդկանց շրջանում հստակ գնահատված չէ որոշակի ժամանակահատված անց մահացության հավանականության փոփոխությունը: Վիճակագրորեն առանձնացված չեն նաև այն դեպքերը, երբ ընտանիքում մի քանի հոգի նույն ախտանիշներով հիվանդ են, սակայն ոչ բոլորն են թեստ հանձնել:

Ընդհանուր առմամբ՝ 2021 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ-ում գրանցվել են 6.3%-ով ավելի շատ մահվան դեպքեր, քան 2020 թ. հունվար-հոկտեմբերին, որոնց մեջ, փաստորեն, ներառված են եղել սեպտեմբերի վերջին օրերին և հոկտեմբերին պատերազմի պատճառով գրանցված մահերը: Մահացության աճի միտումները նկատելի են նույնիսկ պատերազմական գործողությունների ժողովրդագրական հետևանքների տարվա համեմատ: 2021 թ. 10 ամիսների ընթացքում գրանցվել են 30.282 ծնունդներ (նախորդ տարվա համեմատ՝ +0.4%), 27.136 մահեր (+6.3%, 2019 թ. համեմատ՝ +25.6%): Ծնելիության գործակիցը կազմել է 12.3, մահացությանը՝ 11: Մահվան դեպքերի 13.8%-ի պատճառը COVID-19-ն է, իսկ 94.1%-ով ավելացել են ՄԻԱՎ-ով հարուցված դեպքերը: 11.6%-ով աճել է մեռելածինների թիվը: ՀՀ բնակչության բնական հավելաճը 10 ամսում կազմել է 3.146 մարդ, որը 2020 և 2019 թթ. համեմատ նվազ ցուցա-

նիշ է համապատասխանաբար 32 և 62.1%-ով: Հոկտեմբերին ծնունդների թիվը լոկ 11-ով է գերազանցել մահերի ցուցանիշին[110]:

2021 թ. նոյեմբերի 12-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է 2020 թ. վերագնահատված ժողովրդագրական ցուցանիշները՝ 36.353 ծնունդներ և 36.170 մահեր, հետևաբար ՀՀ բնակչության բնական հավելաճը կազմել է ոչ թե 1.077 մարդ, ինչպես տարեսկզբին էր հայտարարվել, այլ մոտ վեց անգամ քիչ՝ 183 մարդ: Համեմատության համար՝ 2014 թ. բնական հավելաճը կազմել է 15.987, Ապրիլյան պատերազմի 2016 թ.՝ 12.366, 2018 թ.՝ 10.823, իսկ նախաքովիդյան և նախապատերազմական 2019 թ.՝ 9.855: Ըստ այդմ՝ մահացությունը ՀՀ համար ռեկորդային 12.2 գործակիցն է ունեցել 1000 մշտական բնակչի հաշվով՝ նախապես հրապարակված 11.9-ի փոխարեն[111], և սա էլ դեռ վերջնական չէր, քանի որ աճյունների նույնականացման գործընթացը շարունակվում էր:

2021 թ. նոյեմբերի 17-ին ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած վերահաշվարկված տվյալները փաստել են, որ 2020 թ. ՀՀ 10 մարզերից 9-ը տարին փակել են բնակչության բացասական բնական շարժով, ընդ որում՝ մահերը գերազանցել են ծնունդներին ՀՀ գյուղական բնակչության շրջանում՝ -0.4 գործակից 1000 մշտական բնակչի հաշվով: Հակառեկորդ է գրանցվել Վայոց ձորում՝ -6.2 գործակից: Համեմատության համար նշենք, որ 2018 և 2019 թթ.

---

[110] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հոկտեմբերին», Երևան, 2021, էջ 119-121: 120-րդ էջում ծանոթագրված է, որ 2021 թ. գրանցված 227 մահերը 2020 թ. պատերազմի հետևանքով դեպքերն են, որոնց քաղաքացիական կացության գրանցումները կատարվել են 2021 թ. ապրիլ-հոկտեմբերին, իսկ արտաքին պատճառներով մահերի 2020 թ. ցուցանիշները կվերանայվեն 2021 թ. տարեկան ցուցանիշների ամփոփման ժամանակ:

[111] Տե՛ս «Հայաստանը թվերով, 2021», Երևան, 2021, էջ 26:

բնական նվազում է եղել միայն Լոռու մարզում, իսկ 2020 թ. աճ է եղել միայն Գեղարքունիքում՝ նախնական +127 մարդ: Լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել սեռատարիքային կազմում, օրինակ՝ 20-24 տարեկան տղամարդկանց թիվը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ, 2018 թ. համեմատ, նվազել է 11.8 հազարով, իսկ 25-29 տարեկան տղամարդկանցը՝ 21.7 հազարով, միասին՝ 33.5 հազար նվազում 20-29 տարեկան տղամարդկանց շրջանում[112]:

2021 թ. հունվար-նոյեմբերին գրանցվել են 0.4%-ով ավելի շատ մահվան դեպքեր, քան 2020 թ. հունվար-նոյեմբերին: Այստեղ ուշադրություն է պետք դարձնել նրան, որ կորոնավիրուսային համավարակը և պատերազմը ներառող 2020 թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածի ցուցանիշի մեջ ընդգրկված են 2021 թ. հունվար-մարտին գրանցված, բայց 44-օրյա պատերազմի ռազմական գործողություններով պայմանավորված մահերը: Սակայն 2021 թ. հունվար-նոյեմբերի տվյալների մեջ 237 դեպքը 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում զինվորական գործողությունների հետևանքով դեպքերն են, որոնց քաղաքացիական կացության գրանցումները կատարվել են 2021 թ. ապրիլ-նոյեմբերին: Սա նույնիսկ պարզաբանված է ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակման մեջ. «... 2020 թ. ցուցանիշները կվերանայվեն 2021 թ. տարեկան ցուցանիշների ամփոփման ժամանակ»[113]: Հաշվի առնելով պաշտոնական տվյալների այս շփոթը՝ համեմատության մեջ դիտարկենք նախահամավարակային և նախապատերազմական 2019 թ. տվյալ-

[112] Տե՛ս «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021», Երևան, 2021, էջ 25-26, 28:
[113] «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-նոյեմբերին», Երևան, 2022, էջ 144:

ները: 2021 թ. 11 ամիսների ընթացքում գրանցվել են 33.587 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ +0.7%, 2019 թ. համեմատ՝ +1.9%) և 31.713 մահեր (+0.4%, 2019 թ. համեմատ՝ +33.3%): Ծնելիության գործակիցը կազմել է 12.4, իսկ մահացությանը՝ 11.7: Նախահամավարակային և նախապատերազմական 2019 թ. 11-ամսյակի համեմատ 10.7%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն, ցավոք, 14.8%-ով էլ աճել են ամուսնալուծությունների դեպքերը: Մահվան դեպքերի 16%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա 11 ամսվա համեմատ վիրուսը 93.5%-ով ավելի շատ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 5.079 պաշտոնական դեպքերի՝ 2019 թ. նկատմամբ մահացության աճը կազմում է 2.852 մարդ (12%): Բացի COVID-19-ի աղետալի հետևանքներից՝ 100%-ով ավելացել են ՄԻԱՎ-ով հարուցված դեպքերը: 10.5%-ով աճել է մեռելածինների թիվը: ՀՀ բնակչության բնական հավելաճը 11 ամսում կազմել է 1.874 մարդ, որը գերազանցում է 2020 թ. նախնական ցուցանիշին 6.1%-ով, սակայն զիջում է 2019 թ. համապատասխան թվին 79.6%-ով[114]: 2021 թ. նոյեմբերի 1-ին համավարակից մահվան դեպքերը հասել են 7.678-ի, նոյեմբերի 7-ին՝ 8.002-ի (վիրուսից և նրա առկայությամբ այլ պատճառով՝ 6.670+1.332), նոյեմբերի 14-ին՝ 8.393: Դպրոցները և բուհերը մի շաբաթ փակ էին, բայց աշխատում էին հանրային տրանսպորտը և զվարճանքի կենտրոնները, որտեղ մարդկանց խտությունը շատ մեծ է: Հավելյալ մահացության տվյալները և պաշտոնական պատճառները վերլուծելիս հնարավոր

[114] Տե՛ս նույն տեղում, էջ 143-145:

է եզրակացնել, որ համավարակով պայմանավորված մահվան դեպքերը մոտեցել էր 10 հազարի, սակայն պաշտոնական վիճակագրությամբ սահմանագիծը հատվել է 2022 թ. փետրվարի 25-ին՝ հիվանդության հետևանքով 8.413 և COVID-19-ի առկայությամբ այլ հիվանդության պատճառով 1.603 դեպքեր (ընդհանուր՝ 10.016)[115]:

Ընդհանուր առմամբ՝ 2021 թ. գրանցվել են 36.585 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ +0.6%, 2019 թ. համեմատ՝ +1.5%) և 34.658 մահեր (-4.2%, 2019 թ. համեմատ՝ +32.4%): Ծնելիության գործակիցը կազմել է 12.4, իսկ մահացությանը՝ 11.7: Մահվան դեպքերի 15.7%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ վիրուսը 53.7%-ով ավելի շատ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 5.450 պաշտոնական դեպքերի՝ նախահամավարակային 2019 թ. նկատմամբ մահացության աճը կազմում է 3.022 մարդ կամ 11.54%: 2020 թ. համեմատ 71.4%-ով ավելացել են ՄԻԱՎ-ով հարուցված դեպքերը, 10.2%-ով՝ մեռելածինների թվաքանակը: 2021 թ. ցուցանիշների մեջ ներառված են 2020 թ. պատերազմում զոհված, սակայն 2021 թ. ապրիլ-դեկտեմբերին գրանցված 250 մահվան դեպքերը. «Սույն տվյալների վերջնականացումից հետո դրանք կներառվեն 2020թ. մահերի ցուցանիշում, հետևաբար

[115] Տե՛ս «Կորոնավիրուսային հիվանդության իրավիճակը Հայաստանում. 2022 թ. փետրվարի 25-ի՝ ժամը 11:00-ի դրությամբ», ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, https://ncdc.am/%d5%af%d5%b8%d6%80%d5%b8%d5%b6%d5%a1%d5%be%d5%ab%d6%80%d5%b8%d6%82%d5%bd%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%b0%d5%ab%d5%be%d5%a1%d5%b6%d5%a4%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%ab%d6%80%d5%a1%d5%be-700/, հասանելի էր՝ 23.08.2023: Հետագայում նկատվել է այլ հիվանդության պատճառով մահվան դեպքերի վիճակագրությունն այլևս չհրապարակելու միտում:

2020-2021թթ. ժողովրդագրական ամփոփ և կառուցվածքային ցուցանիշները կենթարկվեն առավել ամբողջական վերանայման»[116]:

ՀՀ բնակչության բնական հավելաճը կազմել է 1.927 մարդ, որը զիջում է 2019 թ. համապատասխան թվին 80.4%-ով: Ինչքան էլ որ պաշտոնական հրապարակման մեջ ահադղորդ ձևով նշված է, թե բնական հավելաճը 10.5 անգամ գերազանցել է 2020 թ. ցուցանիշին, նկատենք մի ցավալի փաստ. 2020 թ. նախնական +183 տվյալը, փաստորեն, ի վերջո, հենց վերը նշված ծանոթագրությամբ (250 նույնականացված աճյուններ 2021 թ. ցուցանիշի ներքո) վերահաշվարկվելու և դառնալու է -67: Այսպիսով՝ 2020 թ. ՀՀ բնակչության բնական աճի՝ բացասական լինելու փաստն արդեն հաստատվում է պաշտոնական վիճակագրության հիման վրա հաշվարկով: Բացի այդ՝ 2021 թ. հունվարին, ապրիլին, նոյեմբերին և դեկտեմբերին մահեր ավելի շատ են գրանցվել, քան ծնունդներ: Սահմռկեցուցիչ է 2021 թ. նոյեմբերի վիճակագրությունը՝ 3.305 ծնունդ և 4.577 մահ, հետևաբար բնական նվազումը՝ -1.272: Այստեղ զգալի է COVID-19-ի ազդեցությունը՝ հակառեկորդային մահվան 1.326 դեպքերով: Այդ ցուցանիշով երկրորդ տեղում հոկտեմբերն է՝ 795 մահ, իսկ երրորդ հորիզոնականում՝ ապրիլը՝ 774 դեպք: Լոռու, Տավուշի, Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում մահերը գերազանցել են ծնունդներին: 2019 և 2020 թթ. համեմատ ինքնասպանություններն աճել են համապատասխանաբար 24.8 և 4.4 %-ով: Նախահամավարակային և նախապատերազմական 2019 թ. համեմատ 10.3%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն, ցավոք, 14.3%-

[116] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 157:

ով էլ աճել են ամուսնալուծությունների դեպքերը[117]: Ուշագրավ է, որ ՀՀ մայրական մահացության գործակիցը 2021 թ. 5.5 անգամ ավելի բարձր էր (100.000 կենդանի ծնվածի հաշվով՝ 43.7), քան 2017 թ. (8)՝ գերազանցելով նախորդ 10 տարիների ցուցանիշները[118]:

2020 թ. ՀՀ բնակչության բնական նվազման համայնապատկերում ուշագրավ է հարևան պետությունների հետ համեմատությունը, ըստ այդմ՝ Իրանում, Թուրքիայում և Ադրբեջանում գրանցվել է բնական աճ՝ համապատասխանաբար +616.639, +608.894 և +50.924, իսկ Վրաստանում՝ -4.017 բնական նվազում: Արցախում +130 հավելաճի մեջ ներառված են նաև ՀՀ-ում գրանցված արցախյան հաշվառմամբ ընտանիքների ծնունդները: Ի դեպ, թե՛ ՀՀ-ում, թե՛ Ադրբեջանում և թե՛ Վրաստանում գրանցվել են վերջին 50 տարվա ընթացքում մահացության ամենաբարձր գործակիցները 1.000 բնակչի հաշվով՝ համապատասխանաբար 11.9, 7.6 և 13.6: Թուրքիայում և Իրանում էլ գրանցվել են ծնելիության՝ երբևէ ամենացածր գործակիցները՝ համապատասխանաբար 13.3 և 13.6:

Շարունակելով 2020 թվականից նկատվող բացասական միտումները՝ 2021 թ. բնակչության բնական հավելաճը հարևան պետություններում հետևյալ ցուցանիշներն է գրանցել. Իրան՝ +569.963 (+0.68%), Թուրքիա՝ +516.851 (+0.62%), Ադրբեջան՝ +35.406 (+0.35%), Վրաստան՝ -13.960 (-0.38%), որոնք վերջին 60 տարվա ընթացքում բնական աճի վատագույն ցուցանիշներն են (ընդ որում՝ ՀՀ-ում էլ՝ երկրորդ վատագույնը՝ նախորդող տարվանից հետո):

---

[117] Տե՛ս նույն տեղում, էջ 156-158:

[118] Տե՛ս «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու-2022», Երևան, 2022, էջ 88:

2021 թ. ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի գրանցումների հաշվեկշիռը կազմել է -43.874, ընդ որում՝ ՀՀ փաստաթղթերով (ՀՀ քաղաքացիներ կամ կացության փաստաթղթերով)՝ -73.571[119]: Սրանք, ըստ էության, ուղևորաշրջանառության ցուցանիշներն են, իսկ միգրացիոն մնացորդը պաշտոնական նախնական գնահատմամբ -4.200 է, ինչը չի հաստատվում ՌԴ պետական վիճակագրության դաշնային ծառայության՝ դեռևս դեկտեմբերի վերջին հրապարակած ՌԴ սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ ընթացիկ վիճակագրությամբ, որի համաձայն՝ 2021 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ-ՌԴ միգրացիոն հաշվեկշիռը ՀՀ համար կազմել է -35.318: Միայն սեպտեմբեր-հոկտեմբերին հաշվեկշիռը եղել է -9.848: ՀՀ-ն ՌԴ միգրացիոն հաշվեկշռում զիջում է միայն Տաջիկստանին (+71.938), Ուկրաինային (+49.675) և Ղազախստանին (+36.912)՝ առաջ անցնելով Ղրղզստանից (+31.531) և Ուզբեկստանից (+26.715) և զբաղեցնելով առաջին տեղը բնակչության թվաքանակի հարաբերակցությամբ[120]: 2021 թ. ՀՀ կացության կարգավիճակ են ստացել 3.813 անձինք, այդ թվում՝ Հնդկաստանի 1.017, ՌԴ 766 և Իրանի 494 քաղաքացիներ: ՀՀ բնակավայրերի հասցեներով կատարված բնակչության տեղաշարժերի վարչական հաշվառումների ցուցանիշները Սյունիքի մարզում կազմել են -1.387, Տավուշում՝ -628, Վայոց ձորում՝ -589, Գեղարքունիքում՝ -477, Շիրակում՝ -415, Լոռում՝ -118[121]:

---

[119] Տե՛ս նույն տեղում, էջ 163:

[120] Տե՛ս «Социально-экономическое положение России, январь-ноябрь 2021 года», Москва, 2022, էջ 246:

[121] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 162, 165:

2020 թ. պատերազմից ՀՀ մշտական և առկա բնակչության թվաքանակի և առաջինի շարժի մեջ ներկայացվող ծնունդների ու մահերի վիճակագրության ներքո հազվադեպ է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող վիճակագրությունը ցույց տալիս, թե որքանն են այդ ցուցանիշների մեջ Արցախի Հանրապետությունում հաշվառում ունեցող, բայց ՀՀ-ում բնակվող ՀՀ քաղաքացիները: Սա կարևոր է նրանով, որ մի կողմից հասկանանք, թե որքանով են նրանք ազդում ՀՀ-ում ծնելիության բացարձակ ցուցանիշների աճի վրա, իսկ մյուս կողմից՝ որքան մարդ է 2020 թ. պատերազմից հետո մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը փոխել և բնակվում է ՀՀ տարածքում: Խնդրի առնչությամբ որոշակի մոտավոր պատկեր կարող է տալ, օրինակ, ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից տարեկան հրապարակվող «Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում» ժողովածուն: Այսպես՝ եթե 2021 թ. նոյեմբերի 19-ին հրապարակված 2019 թ. ժողովածուում ՀՀ մշտական բնակչության մեջ նշված է Արցախի Հանրապետությունում ծնված 20.949 քաղաքացի[122], ապա 2022 թ. ապրիլի 11-ին հրապարակված 2020 թ. ժողովածուում՝ 13.294[123], իսկ արդեն 2023 թ. ապրիլի 17-ին հրապարակված 2021 թ. ժողովածուում՝ 22.588 քաղաքացի[124]: Թեև 2020-2021 թթ. առաջացած տարբերությունը կազմում է 9.294 մարդ, սակայն այս թիվը ևս չի կարող լիարժեք կամ նույնիսկ մոտավոր պատկեր տալ՝ հաշվի առնելով տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության մեթոդա-

[122] Տե՛ս «Միգրացիոն պատկերը ՀՀ-ում 2019 թ.», Երևան, 2021, էջ 14:
[123] Տե՛ս «Միգրացիոն պատկերը ՀՀ-ում 2020 թ.», Երևան, 2022, էջ 14:
[124] Տե՛ս «Միգրացիոն պատկերը ՀՀ-ում 2021 թ.», Երևան, 2023, էջ 14:

բանությունը, որը կազմում է տրվող վիճակագրության հիմքը, ինչպես նաև 2019 թ. ցուցանիշները: Բացի այդ՝ մշտական բնակչության մեջ չեն ներկայացվում ժամանակավոր՝ մինչև մեկ տարի բնակվողները: Նման իրավիճակում հարցի պատասխանը կարող էր տալ մարդահամարը, եթե անցկացվեր ոչ թե ընտրանքային, այլ համընդհանուր սկզբունքով:

2022 թ. առաջին ամիսներին պահպանվում են նախորդ տարվա վերջի միտումները՝ փոքր-ինչ շտկելով բացասական դինամիկան: 2022 թ. հունվարին գրանցվել են 2.868 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ +1.9%, 2020 թ. համեմատ՝ +4.3%) և 2.840 մահեր (-5.8%, սակայն 2020 թ. համեմատ՝ +7%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.4, իսկ մահացությանը՝ 11.3: Մահվան դեպքերի 4.7%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվարի համեմատ վիրուսը 2.5 անգամ ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 134 պաշտոնական դեպքերի՝ նախահամավարակային 2020 թ. հունվարի նկատմամբ մահացության աճը կազմում է 51 մարդ կամ 1.92%: Բացի COVID-19-ի հետևանքներից՝ 33.3%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային հիվանդություններից և 10.2%-ով էլ՝ մարսողական օրգանների հիվանդություններից հարուցված դեպքերը: 2021 թ. նկատմամբ 16.7%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 30.4%-ով: ՀՀ բնակչության բնական աճը հունվարին կազմել է 28 մարդ, որը 2021 թ. հունվարի վերահաշվարկված -199 ցուցանիշից հետո փոքր-ինչ դրական միտում է, սակայն զիջում է 2020 թ. հա-

մապատասխան թվին 70.8%-ով: Հատկանշական է, որ 57.1%-ով աճել են մինչև 4 տարեկան երեխաների մահվան դեպքերը: Նախահամավարակային և նախապատերազմական 2020 թ. հունվարի համեմատ 10.8%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն 20.5%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվարի համեմատ 1.4%-ով նվազել են ամուսնությունները, և 37.4%-ով էլ աճել են ամուսնալուծությունները[125]:

Ժողովրդագրական իրավիճակն ավելի վատթար է փետրվարին: 2022 թ. հունվար-փետրվարին գրանցվել են 5.344 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -3.4%, 2020 թ. համեմատ՝ +0.9%) և 6.030 մահեր (+11%, 2020 թ. համեմատ՝ +18.5%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.2, իսկ մահացությանը՝ 12.6: Մահվան դեպքերի 7.7%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի համեմատ վիրուսը 5.1%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով մահվան 465 պաշտոնական դեպքերի՝ նախահամավարակային 2020 թ. հունվար-փետրվարի նկատմամբ մահացության աճը 476 մարդ է կամ 9.35%: Բացի COVID-19-ից՝ 2.9%-ով ավելացել են նորագոյացություններից, 8%-ով՝ վարակիչ և մակաբուծային հիվանդություններից, 13.3%-ով՝ արյան շրջանառության համակարգի, 41.4%-ով՝ շնչառական, 5.3%-ով՝ մարսողական օրգանների, 5.8%-ով էլ՝ այլ հիվանդություններից հարուցված դեպքերը: 2021 թ. նկատմամբ 28.4%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 18.4%-ով: ՀՀ բնակչության բնա-

[125] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվարին», Երևան, 2022, էջ 116-117:

կան նվազումը հունվար-փետրվարին կազմել է -686 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-փետրվարյան վերագնահատված ցուցանիշը +102 էր, իսկ 2020 թ.՝ +205: Նախահամավարակային և նախապատերազմական 2020 թ. հունվար-փետրվարի համեմատ 6.2%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն 25.9%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 2021 թ. հունվարի համեմատ 8.5%-ով նվազել են ամուսնությունները, 27.8%-ով աճել են ամուսնալուծությունները[126]:

2022 թ. հունվար-մարտին գրանցվել են 8.098 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -6%, 2020 թ. համեմատ՝ +8.2%) և 8.707 մահեր (+5.3%, 2020 թ. համեմատ՝ +18%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.1, իսկ մահացությանը՝ 11.9: Մահվան դեպքերի 7.6%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-մարտի համեմատ վիրուսը 26.4%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 657 պաշտոնական դեպքերի՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-մարտի նկատմամբ մահացության աճը կազմում է 673 մարդ կամ 9.12%: Բացի COVID-19-ի հետևանքներից՝ 16.2%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային, 10.4%-ով՝ արյան շրջանառության համակարգի, 37.7%-ով՝ շնչառական օրգանների, 0.9%-ով էլ՝ այլ հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 22.6%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 10.3%-ով: ՀՀ բնակչության բնական նվազումը կազմել է -609 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-մարտյան նախագնահատված ցուցանիշը +351 էր,

[126] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-փետրվարին», Երևան, 2022, էջ 129-130:

իսկ 2020 թ.՝ +106: Մահվան դեպքերը գերազանցել են ծնունդներին Երևանում, Լոռիում, Շիրակում, Տավուշում, Գեղարքունիքում, Սյունիքում և Վայոց ձորում: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-մարտի համեմատ 12.7%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն միաժամանակ 27.8%-ով էլ աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-մարտի համեմատ 8.8%-ով նվազել են ամուսնությունները, և 20.5%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: Վարչական հաշվառման անցնելու և դուրս գալու հաշվեկշիռը բացասական է եղել Սյունիքում, Տավուշում, Գեղարքունիքում, Վայոց ձորում և Շիրակում[127]:

Հավելենք, որ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը ապրիլի 1-ի դրությամբ՝ 2011 թ. մարդահամարի տվյալների հաշվարկային հիմքով, 2.9616 մլն էր, որից քաղաքային՝ 1.8914 մլն (այդ թվում Երևանում՝ 1.0932 մլն), գյուղական՝ 1.0702 մլն[128]:

2022 թ. հունվար-ապրիլին գրանցվել են 10.665 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -7.3%, 2020 թ. համեմատ՝ +4.8%) և 10.700 մահեր (-7.3%, սակայն 2020 թ. համեմատ՝ +12.2%): Ծնելիության գործակիցը կազմել է 11, իսկ մահացությանը՝ նույնպես 11: Մահվան դեպքերի 6.3%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-ապրիլի համեմատ վիրուսը 59.5%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 674 պաշտոնական դեպքերի՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-ապ-

[127] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-մարտին», Երևան, 2022, էջ 184-187:
[128] Տե՛ս «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2022 թ. ապրիլի 1-ի դրությամբ», Երևան, 2022, էջ 3:

րիլի նկատմամբ մահացության աճը կազմում է 493 մարդ կամ 5.17%: Բացի COVID-19-ի հետևանքներից՝ 16.3%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային, 2.1%-ով՝ արյան շրջանառության համակարգի, 17%-ով՝ շնչառական օրգանների հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 20.7%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 0.8%-ով: ՀՀ բնակչության բնական նվազումը կազմել է -35 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-ապրիլյան վերագնահատված ցուցանիշը -127 էր, իսկ 2020 թ.՝ +645: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-ապրիլի համեմատ 41%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն 41.7%-ով աճել են ամուսնալուծությունները: 2021 թ. հունվար-ապրիլի համեմատ 5.6%-ով նվազել են ամուսնությունները, 15%-ով էլ՝ աճել ամուսնալուծությունները[129]:

Միտումները շարունակվել են մայիսին: 2022 թ. հունվար-մայիսին գրանցվել են 13.581 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -5.4%, 2020 թ. համեմատ՝ +6.1%) և 12.800 մահեր (-9.5%, 2020 թ. համեմատ՝ +10%): Ծնելիության գործակիցը կազմել է 13.9, իսկ մահացությանը՝ 13.1: Մահվան դեպքերի 5.3%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-մայիսի համեմատ վիրուսը 67.3%-ով ավելի քիչ կյանքեր է խլել[130]: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 682 պաշտոնական դեպքերի՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-մայիսի նկատմամբ մահացության աճը կազ-

[129] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-ապրիլին», Երևան, 2022, էջ 116-117:
[130] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-մայիսին», Երևան, 2022, էջ 162-163:

մում է 482 մարդ կամ 4.14%: 2020 թ. հուլիսի 6-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն 2020 թ. հունվար-մայիսի համար հրապարակել էր COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 105 դեպք՝ ծանոթագրելով, որ ըստ ՀՀ առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի տրամադրած տեղեկատվության՝ COVID-19 հիվանդությունից մահվան դեպքերը կազմել են 139[131]: 2021 թ. փետրվարի 5-ին հրապարակված ամփոփ վիճակագրության մեջ ապրիլ և մայիս ամիսների համար նշված են համապատասխանաբար 24 և 82 թվերը՝ ըստ քաղաքացիական կացության մահվան մասին ակտերի գրանցումների[132]: Ստացվում է, որ ամփոփ տվյալները ներկայացնում են վիրուսի պատճառով մահվան 106 դեպք: Այդուհանդերձ, մեկ տարի առաջ հրապարակվել էր 118 դեպքերի մասին: Նկատի ունենալով այս ցուցանիշը՝ COVID-19-ի պատճառով մահացությունը 2022 թ. համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել է 5.78 անգամ: Իսկ եթե ընդհանրապես հանում ենք COVID-19-ից մահերի վիճակագրությունը թե՛ 2020 և թե՛ 2022 թթ. պարագայում, 2020 թ. հունվար-մայիսի նկատմամբ մահացության աճը կազմում է 600 մարդ կամ 5.21%:

2022 թ. հակառեկորդային է շարունակել մնալ փետրվարին մահացածների թվաքանակը՝ 3.239 մարդ (30.6%-ով ավելին, քան նախահամավարակային 2019 թ. փետրվարին), և միայն այդ ամիս բնակչության բնական նվազումը կազմել է -763: Իրավիճակը փոքր-

---

[131] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-մայիսին», Երևան, 2020, էջ 144:

[132] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 151:

ինչ շտկել և բնակչության բնական աճը դրական է դարձրել մայիս ամսվա վիճակագրությունը՝ 2.916 ծննդյան և 2.100 մահվան դեպքեր: Մահացությունը նկատելիորեն նվազել է նախորդ տարվա ապրիլ և մայիս ամիսների համեմատ: ՀՀ բնակչության բնական հավելաճը կազմել է +781 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-մայիսյան նախագնահատված ցուցանիշը +127 էր, իսկ 2020 թ.՝ +1.163: 15.6%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային, 12.7%-ով՝ շնչառական օրգանների, 0.4%-ով՝ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 12.2%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 10.2%-ով: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-մայիսի համեմատ 55%-ով ավելացել են ամուսնությունները և 52.7%-ով էլ՝ ամուսնալուծությունները: 2021 թ. հունվար-մայիսի համեմատ 3.8%-ով նվազել են ամուսնությունները, և 12.7%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.5 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծություն[133]:

Քննարկված ցուցանիշները լիովին տեղավորվում են ՀՀ ժողովրդագրական անցման ներկա փուլին բնորոշ միտումների մեջ: Սա այն դեպքում, երբ վիճակագրորեն գնահատված չէ COVID-19-ի երկրորդային ազդեցությունը հիվանդությունը հաղթահարածների վերարտադրողական ֆունկցիայի վրա: Նույնը պետք է նշել պատերազմում վիրավորված զինծառայողների պարագայում:

2022 թ. հուլիսին ՄԱԿ բնակչության բաժանմունքի (վարչության) մասնագետները կանխատեսել են, որ նոյեմբերի 15-ին ծնվե-

[133] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-մայիսին», էջ 162-163:

լու է աշխարհի ութմիլիարդերորդ բնակիչը: Հրապարակված զեկույցում 2019 թ. նախորդ կանխատեսումների համեմատ զգալի փոփոխություններ են կատարվել ՀՀ պարագայում՝ հաշվի առնելով տեղի ունեցած իրադարձությունների ժողովրդագրական հետևանքները: Ըստ այդմ՝ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2021 թ. հուլիսին, ՄԱԿ գնահատմամբ, կազմել է 2.791 մլն: Կանխատեսման միջին սցենարի համաձայն՝ մինչև 2080 թ. բնակչությունը կկրճատվի մինչև 2 մլն մարդու ցուցանիշից ցածր, մինչև 2100 թ.՝ 1.6 մլն, մինչդեռ ըստ լավատեսական սցենարի՝ 2080 թ. կկազմի մոտ 2.6 մլն, իսկ 2100 թ.՝ 2.506 մլն: Բացասական սցենարների համաձայն, իսկ համապատասխան նախադրյալները պահպանվում են, մինչև 2044 թ. ՀՀ բնակչությունը կնվազի մինչև 2.5 մլն, 2065 թ.՝ 2 մլն, իսկ 2100 թ. կկազմի ընդամենը 938 հազար մարդ[134]:

Համեմատության համար հետաքրքիր են հարևան Ադրբեջանի համար կանխատեսումները: Պաշտոնապես հրապարակվում է բնակչության 10.3 մլն թվաքանակ՝ դրա մեջ ներառելով արցախահայությանը: ՄԱԿ կանխատեսման միջին սցենարի համաձայն՝ մինչև 2071 թ. Ադրբեջանի բնակչության թիվը կնվազի մինչև 10 մլն, 2100 թ.՝ 8.2 մլն մարդ, մինչդեռ լավատեսական սցենարով 2061 թ. Ադրբեջանի բնակչությունը կգերազանցի 12 մլն, իսկ 2100 թ. կկազմի 12.6 մլն, այսինքն՝ հինգ անգամ ավելի, քան ՀՀ բնակչությունը: Բացասական սցենարի համաձայն՝ 2033 թ. Ադրբեջանի բնակչությունը կսկսի նվազել՝ իջնելով 2050 թ. 10 մլն, 2062 թ.՝ 9 մլն, 2073

[134] Տե՛ս "The 2022 Revision of World Population Prospects", UN Department of Economic and Social Affairs Population Division https://population.un.org/wpp/Publications/, հասանելի էր՝ 23.08.2023:

թ.՝ 8 մլն, 2082 թ.՝ 7 մլն, 2092 թ.՝ 6 մլն: 2100 թ. Ադրբեջանի բնակչությունը կկազմի 5.167 մլն[135], բայց դա կրկին հինգ անգամ ավելի է, քան ՀՀ բնակչությունը: ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը, ցավոք, համեմատելի է 50 տարի առաջվա տվյալի հետ, սակայն ապագայում կանխատեսումները կարող են փոխվել՝ կախված իրավիճակից և միտումներից, քանի որ գլխավոր խնդիրները լուծելու դեպքում բնակչության թվաքանակը կայուն կլինի: Ի դեպ, սույն կանխատեսումներն առաջիկայում վերանայվելու են, քանի որ 2022 թ. հոկտեմբերի մարդահամարի արդյունքները փոխելու են հաշվարկային հիմքը՝ մշտական բնակչության թվաքանակը:

2022 թ. օգոստոսի 6-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը տարվա առաջին կիսամյակում բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ 2022 թ. հունվար-հունիսին գրանցվել են 16.511 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -4.3%, 2020 թ. համեմատ՝ +4.5%) և 14.679 մահեր (-10.5%, սակայն 2020 թ. համեմատ՝ +1.2%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.2, իսկ մահացությանը՝ 10: Մահացությունը գերազանցել է ծնելիությանը Լոռու (-300), Տավուշի (-78) և Շիրակի (-74) մարզերում: Մահվան դեպքերի 4.7%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-հունիսի համեմատ վիրուսը 68.6%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 687 պաշտոնական դեպքերի՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-հունիսի նկատմամբ մահացության նվազումը կազմում է

[135] Տե՛ս նույն տեղում:

513 մարդ կամ 3.67%: Այսպիսով՝ համավարակի մեկնարկից հետո առաջին անգամ գրանցվել է մահացության հարաբերական նվազում: Հակառեկորդային է շարունակում մնալ փետրվարին մահացածների թվաքանակը՝ 3.239 մարդ: Բնակչության բնական աճը փոքր-ինչ դրական է դարձրել մայիս և հունիս ամիսների վիճակագրությունը՝ համապատասխանաբար 2.916 ու 2.930 ծննդյան և 2.100 ու 1.879 մահվան դեպքերով: Մահացությունը նկատելիորեն նվազել է նախորդ տարվա ապրիլ, մայիս և հունիս ամիսների համեմատ, ինչը, առաջին հերթին, բացատրվում է COVID-19-ի պատճառով մահացության նվազմամբ: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ բնակչության բնական հավելաճը հունվար-հունիսին կազմել է +1.832 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-հունիսյան նախագնահատված ցուցանիշը +846 էր, իսկ 2020 թ.՝ +1.293: Վեց ամիսների կտրվածքով՝ 15.1%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային, 8.1%-ով՝ շնչառական օրգանների, 1%-ով՝ այլ հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 7.9%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 10.6%-ով: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-հունիսի համեմատ 50.7%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն միաժամանակ 47.8%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-հունիսի համեմատ 2.5%-ով նվազել են ամուսնությունները, և 10.2%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.6 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծության դեպք[136]:

[136] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-հունիսին», Երևան, 2022, էջ 159-162:

Միևնույն ժամանակ նշենք, որ 2022 թ. առաջին կիսամյակում ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը +16.486 էր, ՀՀ փաստաթղթերով՝ -39.833: Եթե բնական աճի պատկերը վերջին երեք ամիսներին փոքր-ինչ դրական միտում ունի, ապա շատ մտահոգիչ է ուղևորաշրջանառության բացասական բալանսը հատկապես ՀՀ փաստաթղթերով անձանց պարագայում: Միաժամանակ ՀՀ բնակավայրերի հասցեներով կատարված բնակչության տեղաշարժերի վարչական հաշվառումների հաշվեկշիռը բացասական է շարունակում մնալ Սյունիքում (-339), Շիրակում (-315), Լոռիում (-120), Գեղարքունիքում (-115), Տավուշում (-109) և Վայոց ձորում (-107)[137]:

2022 թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը տարվա առաջին յոթ ամիսներին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ հունվար-հուլիսին գրանցվել են 19.470 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -3.4%, 2020 թ. համեմատ՝ +0.2%) և 16.548 մահեր (-11.1%, 2020 թ. համեմատ՝ -3.9%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.3, իսկ մահացությանը՝ 9.6: Հուլիսին գրանցվել են տարվա կտրվածքով ամսական ամենաշատ ծնունդները (2.959) և ամենաքիչ մահերը (1.869): Մահվան դեպքերի 4.2%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-հուլիսի համեմատ վիրուսը 69.3%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով 2022 թ. հունվար-հուլիսին հարուցված մահվան 698 պաշտոնական դեպքերի (15.850)՝ համավա-

[137] Տե՛ս նույն տեղում, էջ 165-166:

ռակի մեկնարկային 2020 թ. հունվար-հուլիսի նկատմամբ, առանց այդ ամիսներին նույն պատճառով մահվան 780 դեպքերի (16.444), մահացության նվազումը կազմում է 594 մարդ կամ 3.61%: Այսպիսով՝ համավարակի մեկնարկից հետո առաջին անգամ երկու ամիս անընդմեջ գրանցվում է մահացության հարաբերական նվազում: Մահացությունը նկատելիորեն նվազել է նախորդ տարվա ապրիլ, մայիս, հունիս և հուլիս ամիսների համեմատ, ինչը, առաջին հերթին, բացատրվում է COVID-19-ի պատճառով մահացության զգալի նվազմամբ: ՀՀ բնակչության բնական հավելաճը հունվար-հուլիսին կազմել է +2.922 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-հուլիսյան նախագնահատված ցուցանիշը +1.542 էր, իսկ 2020 թ.՝ +2.211: Յոթ ամիսների կտրվածքով՝ 3.4%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային, 7.6%-ով՝ շնչառական օրգանների հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 9.2%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 6.2%-ով: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-հուլիսի համեմատ 44.6%-ով ավելացել են ամուսնությունները, միաժամանակ 42.6%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-հուլիսի համեմատ 3.4%-ով նվազել են ամուսնությունները, 5.7%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.6 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծության դեպք[138]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը +38.218 էր, սակայն միևնույն ժամանակ ՀՀ փաստաթղթերով՝ -54.422: Եթե բնական աճի պատկերը չորս ամիս

[138] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-հուլիսին», Երևան, 2022, էջ 121-122:

շարունակ դրական միտում ուներ, շատ մտահոգիչ էր ՀՀ փաստաթղթերով անձանց ուղևորաշրջանառության բացասական հաշվեկշիռը: ՌԴ քաղաքացիների մուտքերի և ելքերի հաշվեկշիռը +67.608 է, ԱՄՆ-ի՝ +6.340, Վրաստանի՝ +5.563, Ֆրանսիայի՝ +2.697, Նիդերլանդների՝ +1.700, Բելգիայի՝ +1.547, Գերմանիայի՝ +1.499, Բելառուսի՝ +544, Ուկրաինայի՝ +447, Միացյալ Թագավորության՝ +428, իսկ Հնդկաստանի՝ -1.364[139]: Նման ցուցանիշներն ամառային ամիսներով են պայմանավորված. ՀՀ-ում բնակվող Հնդկաստանի քաղաքացիների մեծ մասը ուսանողական կարգավիճակ ուներ և արձակուրդի ժամանակ վերադարձել էր հայրենիք, իսկ արևմտյան պետությունների և ՌԴ պարագայում ժամանակավորապես վերադարձել էին մեր հայրենակիցները, ինչպես նաև եղել է ոչ-հայկական ծագմամբ քաղաքացիների ներհոսք, սակայն ՀՀ-ում կացության կարգավիճակ առաջին կիսամյակում ստացել են ՌԴ ընդամենը 1.059 քաղաքացիներ, որոնց քառորդ մասը՝ ժամանակավոր:

2022 թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը տարվա առաջին ութ ամիսներին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ հունվար-օգոստոսին գրանցվել են 22.964 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -2.2%, 2020 թ. համեմատ՝ +0.5%) և 18.554 մահեր (-11%, 2020 թ. համեմատ՝ -4%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.6, իսկ մահացությանը՝ 9.4: Օգոստոսին գրանցվել են տարվա կտրվածքով ամսական ամենաշատ ծնունդները (3.494), իսկ հուլիսին՝ ամենաքիչ մահերը (1.869):

[139] Տե՛ս նույն տեղում, էջ 123:

Մահվան դեպքերի 3.9%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-օգոստոսի համեմատ վիրուսը 70.7%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով 2022 թ. հունվար-օգոստոսին հարուցված մահվան 726 պաշտոնական դեպքերի (17.828)՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, առանց այդ ամիսներին նույն պատճառով մահվան 937 դեպքերի (18.393), մահացության նվազումը կազմում է 565 մարդ կամ 3.07%: Այսպիսով՝ համավարակի մեկնարկից հետո վերջին երեք ամիսներին, ընդհանուր առմամբ, առաջին անգամ գրանցվում է մահացության հարաբերական նվազում: Մահացությունը նկատելիորեն նվազել է նախորդ տարվա ապրիլ, մայիս, հունիս և հուլիս ամիսների համեմատ, ինչը, առաջին հերթին, բացատրվում է COVID-19-ի պատճառով մահացության զգալի նվազմամբ: ՀՀ բնակչության բնական հավելաճը կազմել է +4.410 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-օգոստոսյան նախագնահատված ցուցանիշը +2.637 էր, իսկ 2020 թ.՝ +3.528: Ութ ամիսների կտրվածքով՝ 5.6%-ով ավելացել են շնչառական օրգանների հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 9.9%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 0.3%-ով: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-օգոստոսի համեմատ 41%-ով ավելացել են ամուսնությունները, իսկ 40.4%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-օգոստոսի համեմատ 3.4%-ով նվազել են ամուս-

նությունները, և 3.1%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.65 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծության դեպք[140]:

